ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<----->> փետրվարի 2012թ. N—— -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ (ՏՅՈՒԼԵՆԻՆԻ) ՓՈՂՈՑԻ Հ.10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՉՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 21-ի հ.226 որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետը և ղեկավարվելով Երևանի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.345-Ն որոշման ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող, Երևանի համայնքի սեփականությունը համարվող շենքի տարածքներն անհատույց սեփականության իրավունքով օտարել դրանցում փաստացի բնակվող զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ (ՏՅՈՒԼԵՆԻՆԻ) ՓՈՂՈՑԻ Հ.10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՉՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 21-ի հ.226 որոշմամբ Շահամիրյանների (Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում <<Մահուդ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրինության տակ գտնվող շենքում բնակվող զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով Շահամիրյանների (Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող շենքը սահմանված կարգով առանձնացվել է ընկերության գույքի կազմից և վաճառվել Շենգավիթ թաղային համայնքին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 21-ի հ.226 որոշման 1-ին կետի բ)ենթակետի համաձայն՝ շենքը սահմանված կարգով պետք է վերակառուցվեր բնակելիի և հանձնվեր շենքում բնակվող զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին: Հետագայում նրանք պետք է գրանցեին իրենց սեփականության իրավունքը զբաղեցրած տարածքների նկատմամբ, սակայն մինչ այսօր միայն 10 (տասը) ընտանիքներ են օգտվել այդ հնարավորությունից և գրանցել իրենց սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քննարկվող տարածքը ներկայումս համարվում է Երևանի համայնքի սեփականությունը, ապա այստեղ բնակվող զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների խնդիրը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է ստանալ Երևանի ավագանու թույլատրությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ (ՏՅՈՒԼԵՆԻՆԻ) ՓՈՂՈՑԻ Հ.10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՉՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող շենքում չսեփականաշնորհված տարածքները անհատույց օտարելու թույլատրություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ (ՏՅՈՒԼԵՆԻՆԻ) ՓՈՂՈՑԻ Հ.10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՉՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների (Տյուլենինի) փողոցի հ.10 հասցեում գտնվող շենքում չսեփականաշնորհված տարածքները անհատույց օտարելու թույլատրություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ